ատաղձները տաշուած են Տարսոն եւ բերուած են Բեթղեհէմ. ազգ. աւանդութենէն զատ՝ այդ անփուտ փայտի գերաններուն ձեւը եւ ատաղձներուն տաշուածքը ցոյց կուտան թէ անոնք Տաւրոսի լեռներու վարպետներուն գործերն են։ (ժպ. Հատ. Ա., էջ 182)։

ՀԵԹՈՒՄ Բ. ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ. Որդի Լեւոն Գ. ի.—1300ին Թաթարները կը միաբանին Հայոց հետ եւ պատերազմով Երուսաղէմը կ'ազատեն Եգիպտական իշխանութենէն. Ս. քաղաքին թագաւորութիւնը կ'ստանձնէ Հեթում Բ., իսկ Թաթարներու Ղազան խանը կը մեկնի Պարսից ապստամբութեան պատճառաւ, բայց Դամասկոս հասնելուն՝ կը հիւանդանայ և կը մեռնի հոն. Հեթում այս գոյժը առնելով՝ կը փութայ մեկնիլ Երուսաղէմէն Կիլիկիա, վերաշինելու համար իր երկրին աւերակները։

Ամդեցի Մինաս վրդ. իր Ազգաբանութիւն Հայոց գիրքին մէջ (տպ. Վաղարշապատ, էջ 45) Հեթում Բ. ի Եգիպտացւոց դէմ մղած այս պատերազմին և Երուսաղէմ գալուն առթիւ հետեւեալ նշանակալից հատուածը կը գրէ. «եւ երկնչեալ Հեթում՝ գուցէ պարտիցի. եւ ասէ. շատ է ինձ այս զօրութիւնս. զի նախնիքն իմ զայս յաղթութիւնս ոչ արարին։ Եւ ի տեղին զմեծ ծառն սօսի թրով նշանս արար. եւ ի բարաւորս դրացն՝ զիրս գրեաց այսպէս. Հեթում թագաւոր Սսոյ՝ մինչ յայս վայր փախոյց զՄարցին։ Եւ ի դարձին գայ յերուսաղէմ, ծե. աւուրբ կացեալ մեծ տօնախմբութիւնս առնէ։ Եւ դատաւորք Երուսաղէմի փախուստ առնէին։ Եւ հնաս հրաման խաղաղական ի խանէն՝ թէ Երուսաղէմ շրջագայիւքն՝ իւրն լիցի։ Եւ Հեթում որ կամելով զԽ. իջևանն՝ ծ. աւուրբք վերադառնայր»։ Հեթում Բ. Երուսաղէմ գտնուած միջոցին կատարած է զանազան բարեպաշտական գործեր ալ. շինած է սեղան մը Ս. Աստուածածնի տաճարին արևելեան կողմը, որ այժմ Հայոցս կը պատկանի. ինչպէս կը յիշէ Հանկի (էջ 264), ուր այս մասին կը կարդանք հետևեալը. «Հին յիշատակարանաց մէջ գրուած կը գտնենք այսպէս. Երկրորդ Հեթում արքայն Հայոց, յերկրորդ թագաւորութեան իւրում, ողորմութեամբն Աստուծոյ զկնի յաղթութեան Սուլթանին Եգիպտացւոց, եկն ի սուրբ քաղաքս, յուխտ եւ երկրպագութիւն տնօրինական Սուրբ Տեղեաց. եւ յետ ի սակաւ աւուր բազում շինութեան, կառոյց